

ՍՍՈՒ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԹԵՇԱՄՈՒ ԿԵՐՊԱՐԾ  
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱԳՑՈՒՄՈՒԹՅԱՆ ՄԵջ

ԱՐՄԵՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1943

891.99(09)

95.380

Դ-36 | Գևորգյան, Ա.

Թշուառ Կըրպարք Խաղաղաբեկ  
երե բանահովության մաս:

4n.

ՍԱՐԾԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻԼԻԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵԶՎԻ ԻՆՍԻՏՈՒՏ

891.99.09

ԱՎՈԽՎԱՆ է 1961 թ.

Դ-36

Ա. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

ԹԵՇԱՄՈՒ ԿԵՐՊԱՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵջ

425386  
A 6349



ԱՐՄՖԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1943

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությութեների Ակադեմիայի  
Հայկական Ֆիլիալի Նախագահության որոշմամբ:

Պատ. Խմբագիր՝ Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

# Ա

Հայ ժողովուրդը աշխարհի այն սակավաթիվ ժողովուրդներից մեկն է, որոնց կյանքը, պատմական գեղքերի բերումով, անցել է մարտի երթերի և արյունահեղ ընդհարումների մեջ։ Դարեր շարունակ նրա վզին կախված է եղել օտարերկրյա բռնակալների արյունուսուրը։ Դարերի ընթացքում զանազան այլազգի ու այլադավան թշնամիներ տարել են նրա արդար վաստակի արդյունքը, ոտնահարել նրա ամենանվիրական սըրբությունները, ձեռք են բարձրացրել նրա աղատության ու անկախության վրա, վիրավորել նրա ազգային արժանապատվությունը, արհամարհել են նրա լեզուն ու կրոնը, ոչնչացրել հոգենոր և նյութական կուլտուրայի լավագույն հուշարձանները, խորը խոցել են նրա հոգին, բռնադատել նրա մարդկային իրավունքներն ու պատիվը։ Օտարերկրյա բռնակալների հանցանքով է, որ խաղաղասեր ու ստեղծագործ հայ ժողվրդի հայրենի երկիրը պարբերաբար դարձել է պատերազմների թատերաբեմ, ավերվել ու ամայացել են նրա ծաղկուն քաղաքներն ու շեները։ Հայաստանի պատմական այս ճակատագիրը պատկերավոր կերպով բնութագրված է 10-րդ դարի նշանավոր արարացի աշխարհագիր Իբն-ալ-Փակին Համադանիի «Քիթաբ-ալ-Բուլդան» («Երկիրների գիրք») վերնագրով

աշխատության մեջ։ Հարասելով Քարին, նա պատմում  
 է. «Ես գտա զբքերի մեջ..., որ Մեքքան ավերում են  
 հարեները, Մեղինան՝ սովը, Բասրան՝ ջրհեղեղը,  
 Քուֆը՝ գաղթը, Զիբալը քար ու քանդ է լինում կայ-  
 ծակի հարվածներից ու երկրաշարժներից, Խորասանը՝  
 այլ և այլ պատուհասներից, Ռեյը բռնադատում են  
 դիլամցիք և թարարստանցիները, իսկ ինչ վերաբե-  
 րում է Հայաստանին և Ատրպատականին, ապա այդ  
 երկու երկիրները կործանվում են հեծելազորի սմբակ-  
 ներից և մեկ էլ կայծակների ու երկրաշարժի հար-  
 վածներից։ Նույն իբն-ալ Ֆակիհը բերում է և հետե-  
 վյալ խոսակցությունը. «Միբիացի Մաքհուլն ասաց. —  
 Ամենից հաճախակի ավերումների ենթակա երկիրը  
 Հայաստանն է։ Հարցրին նրանից. — Ի՞նչն է դրա  
 պատճառը։ Նա ասաց. — Հեծելազորի սմբակները»:<sup>1</sup>

Նույնը կրկնում է նաև 12-րդ դարի հայ պատմիչ  
 Մատթեոս Ուռհայեցին։ Նկարագրելով սելջուկյան բըռ-  
 նապետների սանձակոծ հորդաների՝ Հայաստանում կա-  
 տարած ավերածություններից մեկը, նա դառնացած  
 բացականչում է. «... սմբակք երիվարաց նոցա մաշե-  
 ցին զլերինս և զբլուրս»:<sup>2</sup>

Հայ ժողովրդի ազգային խաղաղասեր ու ստեղծա-  
 գործ բնավորության և պատմական ճակատագրի մի-  
 ջև եղած հիշյալ ուժեղ հակադրությունը ծանը է դարձ-  
 րել նրա կյանքը։ Սակայն, ժողովուրդը երբեք չի հու-  
 սալքվել։ Ամեն անդամ անօրինակ պայքարով դիմա-

<sup>1</sup> Biblioth. Geograph. Arab., V, 1855, էջ 257.

<sup>2</sup> Մաքրես Ուռհայեցի, Ժամանակադրութիւն, թ. տիս, Վաղարշապատ, 1898 թ., էջ 140.

գրավելով իր երկիրը խուժող թշնամուն և ազատազրելով նրանից հայրենի հողը, իր հարազատ հեղինակներից մեկի երգած ծիծեռնակի նման<sup>1</sup> նա մեծ ջանասիրությամբ վերականգնել է «արյունախում թշնամու» կողմից քանդված իր բունը։ Անդուլ աշխատանքով և դառն քրտինքով նա նոր ի նորո վերաշնել է իր ավերված քաղաքներն ու շեները, ակռակ խոպան մնացած դաշտերը, հրաշակերտել իր հոյակապ վանքերն ու տաճարները, դարդացրել իր գիրն ու գրականությունը, հնչեցրել իր աշխատանքի ու սիրո սքանչելի երգերը։

Որքան ավելի արյունուշտ ու բարբարոս է եղել թշնամին, այնքան ավելի մեծ ու անսասան է եղել և ժողովրդի պայքարի կորովը։ Իր խոփը վահան դարձրած և գրիչը՝ սուր, վանքերը դարան շինած ու խաչքարերը՝ դիրք, իր տաճարները բերդի վերածած և խունկը՝ վառողի, նա համառորեն դիմադրել է թշնամուն։ Արյունահեղ կոփիմերով հեռու վանելով իր հայրենիքի սահմաններից նրա ոսոխներին, հայ ժողովուրդը տարիների ու տասնամյակների ընթացքում հետզհետե բուժել է նրանց հասցրած ծանը ու խոր վերքերը։ Բայց բուժելով, նա չի մոռացել իր պատուհասիչներին, նրանց կատարած ավերն ու ավարը, նրանց դավադիր ու նենգ կերպարը։ Իր պատմիչների ու գրողների ձեռքով, ի գիտություն դալոց սերունդների, նա դրոշմել է նրանց անունները հայրենի դըպության էջերում, վիպել ու երգել նրանց արյունոտ

<sup>1</sup> Խոսքը Դ. Աղայանի «Ծիծեռնակ» վերնագրով հայտնի բանաստեղծության մասին է։

արտղքների մասին։ Պերճախոս են այս տեսակետից մեզ հասած պատմագրական մի շարք հուշարձանների ոչ միայն բովանդակությունները, այլև վերնագրերը. «Ողբ Եղեսիոյ» (Ն. Շնորհալի), «Յիշատակարան աղետից» (Գր. Խլաթեցի), «Վերք Հայաստանի» (Խ. Աբովյան) և այլն։

Չայնակցելով իրենց ուսույալ ու անվանի հայրենակիցներին, նույնը բանավոր գեղարվեստական խոսքով արել են նաև հայոց անանուն և անուա վիպասաններն ու գուսանները՝ երկար դարերի ընթացքում բերներերան և սերնդից սերունդ վիպելով ու երգելով իրենց հայրենիքի ոսոխների և նրանց կատարած այդ արյունոտ արարքների մասին։

Օտարերկրյա բռնակալի գործն ու անձը, երբեմն ավելի, երբեմն պակաս, արձագանք է գտել հայկական բանահյուսության մեզ հասած բազմաթիվ մեծ ու փոքր հուշարձանների մեջ։ Նրա մասին ավանդում են հայոց հնագույն առասպելներն ու զբույցները։ Նրա պատմությունն են անում հայկական հին ու նոր վեպերը։ Նրան հիշատակում են հայ գեղջուկի քնարական ու վիպական երգերը։ Նրա վերաբերյալ ակնարկներ են անում նույն այդ գեղջուկի իմաստուն առածներն ու ասացվածքները, թունոտ ու թունդ անեծքներն ու նղովքները։

Եվ եթե հաճախ արտաքին թշնամին հայժողովրդի դարավոր կուլտուրայի բազմաթիվ այլ հուշարձանների հետ ոչնչացրել, հրի ճարակ է դարձրել նաև իր և իր նախնիների մասին հուշող վերոհիշյալ մագաղաթյա մատյաններն ու գրքերը, ապա, առասպելաշեն ժողո-

վուրդն իր հիշողության անկիզելի գանձարանում պահել ու պահպանել է նրա մասին իր պապերի և ապուպապերի ավանդած գեղարվեստական բանավոր խոսքի վերոհիշյալ հուշարձանները:

## Բ

Բանահյուսության նյութ դարձնելով իր առավել աչքի ընկնող թշնամիներին, հայ ժողովուրդը հիմնականում հարազատ է մնացել նրանց իրական-պատմական բնութագրերին։ Սակայն, միայն հիմնականում իր առասպելներում ու զրույցներում, վեպերում ու երգերում նա չի ներկայացրել վերջիններիս այնպես, ինչպես դրանց մասին հաղորդված է իրական դեպքերի ու դեմքերի համեմատաբար ավելի մոտ պատկերը տվող պատմա-մատենագրական հուշարձաններում։ Անցնելով ժողովրդի ստեղծագործական բովլից (վերաստեղծվելով նրա երեակայության մեջ և այդ երեակայության միջոցով) և կրելով իրենց վրա բանավոր ավանդության ուրույն կնիքը, պատմական վերօնիշյալ դեմքերը ենթարկվել են նկատելի փոփոխությունների։ Ժողովուրդը խմբագրել է նրանց, խտացրել կամ մեղմել է գույները, մարմնավորել նրանց մեջ այն ամենը, ինչ ինքն է մտածել ու զգացել նրանց մասին, կատարել վիպական-գեղարվեստական ընդհանրացումներ։

Թշնամու կերպարը կերտելու, նրա դիմանկարն ավելի կենդանի ու խոսուն դարձնելու, նրա ներքին էությունն ու արտաքին տեսքն առավել հաջող դրսե-

վորելու համար, հայ ժողովուրդը կիրառել է ժողովը՝ դական բանահյուսության համար բնորոշ ստեղծագործական հիմնական մեթոդը՝ ռեալիզմը, օգտագործել է այդ բանահյուսության մեջ դարերի ընթացքում մշակված ու փորձված դեղարվեստական խոսքի ամենաարտահայտիչ միջոցները:

Իր բանավոր ստեղծագործության մեջ հայ ժողովուրդը տվել է թշնամու բազմակողմանի բնութագիրը, քանդակել նրա ամբողջական դիմանկարը: Ոչ մի քիչ թե շատ կարեոր ու բնորոշ գիծ, որ տիպական է եղել օտարերկրյա բոնակալին, չի վրիպել նրա սրատես հայացքից, անարձագանք չի մնացել նրա բանահյուսության մեջ:

Առաջին և հիմնական հատկությունը, որ նկատել է ժողովուրդը թշնամու մոտ և արձանագրել իր դրույցներում ու վեպերում՝ դա նրա բոնակալական, աշխարհակալական բնությունն է — օտարի հողը գրավելու, նրա ազատությունը բառնալու, կայք ու գույքին տիրանալու ձգտումը: Բայ ժողովրդի՝ թշնամուն կատարելապես խորթ է ստեղծագործ ու շինարար աշխատանքի, խաղաղ ու հանգիստ կյանքի դադարակը: Ավելին, նա ոչ միայն չի ասլում դրանով, այլև մուկնում ու կատաղում է, երբ տեսնում է ուրիշին այդ աշխատանքի ու կյանքի մեջ: Սովորաբար մենք հանդիպում ենք նրան ավերի ու ավարի պատրաստվելիս, կողոպուտով ու հարկահանությամբ զբաղված, սպանելիս ու գերեվարելիս, առեանգելիս կամ հրկիզելիս:

Իր բոնակալական հասարակական գործունեության համեմատ, թշնամին հայկական բանահյուսության մեջ հանդես է գալիս նաև համապատասխան ներքին

աշխարհով: Նրա բարոյական դիմանկարի ամենաաչքից  
ընկնող կողմը խարդախությունն ու գավադրությունն  
է: Թշնամին չունի հաստատուն հենարան ոչ իր ժողո-  
վըրդի և ոչ էլ օտարների մեջ: Նա չի կարողանում  
գործել բացեիրաց, որովհետեւ անվտան է իր ուժե-  
րին, թերանավատ իր հաղթանակի նկատմամբ: Ուստի  
և, իր նպատակին հասնելու համար, նա կանգ չի առ-  
նում ոչ մի միջոցի առջե: դրժում է իր պայմանն ու  
ուխտը, խախտում տված խոսքն ու երդումը:

Դավադիր ու խարդախ լինելով, թշնամին միա-  
ժամանակ նաև արյունոուշտ է ու չար. առանց ոճրա-  
գործ դաժանության նա չի կարող իրականացնել իր  
ժողովրդադավ և տմարդի ծրագրերը: Ենելով բնա-  
կան և բանական այս դրությունից, ինչպես նաև  
իրական կյանքում իր տեսած ու զգացած չար և ա-  
րյունոուշտ թշնամիների օրինակից, հայ ժողովուրդն  
իր բանահյուսության մեջ բավական ցայտուն անդ-  
րադարձրել է նրա ընավորության այս կողմն ևս:

Թշնամու ներքին աշխարհի հատկորոշ գծերն են,  
ըստ ժողովրդի, նաև պարծենկոտությունն ու շաղա-  
կրատությունը, վախկոտությունն ու փոքրոգությու-  
նը: Նա առիթ բաց չի թողնում իր եսը ցուցադրելու,  
սեփական բարեմասնությունները գրվատելու համար,  
բայց հենց որ խոսքից անցնում է գործի, երբ ճակատ  
առ ճակատ հանդիպում է իր ախոյանների հետ, ան-  
միջապես կերպարանափոխ է լինում: Երբեմնի պար-  
ծենկոտաշաղակրատը դառնում է վախկոտ ու փոքրոգի  
մի էակ: Թշնամու ընավորության վերջին երկու  
գծերը, սովորաբար, հանդես են գալիս մեկը մյուսի  
հետ և բխում են իրարից: Դրանց երկուսի հասարա-

կական-հոգեբանական հիմքն էլ նույնն է: Այդպիսի  
հոգեկան հատկություններով օժտված են լինում  
նրանք, ովքեր զուրկ են անձնական ու հասարակական  
իսկական արժանիքներից, վստահ չեն իրենց ուժերին,  
ովքեր հիմք ու հենարան չունեն իրենց ոտների տակ  
և ոչ էլ համակիրներ՝ ըշջապատռում:

Բացասական է, ժողովրդի պատկերացմամբ, թշրի  
նամու ոչ միայն ներքինը, այլև նրա ֆիզիկականը:  
Այդպես չի եղել հարկավ, կյանքի մեջ: Հայ ժողովրդի  
իրական-պատմական թշրիները, ինչպես և առհա-  
սարակ բոլոր արտաքին նվաճողները, իրեւ բոնակալ-  
ներ, իրենց էությամբ ու գործունեությամբ լինելով  
դառն ու դաժան, արտաքինով եղել են սովորական  
մարդիկ: Բանն այն է, որ, եթե թշրին ներքին աշ-  
խարհը պատկերելիս ժողովուրդը հիմք է ունեցել  
համապատասխան նախատիպերի, բանաստեղծորեն  
վերամշակելով վերջիններիս, ապա նրա արտաքինը  
նկարագրելիս նա հենվել է գերազանցորեն իր ստեղ-  
ծագործական երևակայության վրա: Նա հոգեբանորեն  
անհարիր է համարել այլանդակ ներքին ունեցող  
թշրին ներկայացնել սովորական արտաքինով: Ուս-  
տի և, նրա ֆիզիկականը տալիս՝ ժողովուրդը խտաց-  
ըել է գույները բացասական առումով, արտահայտելով  
դրանով թշրին նկատմամբ իր մեջ եղած խորը ա-  
տելությունն ու արհամարհանքը:

Ժողովրդի ատելությունը թշրին նկատմամբ չի  
բխում միայն այն հանգամանքից, որ թշրին ան-  
միջական, ֆիզիկական վնաս ու ցավ է հասցնում նը-  
րան՝ ավերելով ու ավարելով նրա երկիրը:

Այդ ատելության հիմնական և գլխավոր աղբյուրն

այն է, որ ժողովուրդը թշնամու մեջ տեսնում է իր  
դավանած բարոյական ու հասարակական սկզբունք-  
ներին խորթ և հակադիր սկզբունքների կրողին:

Իրենց դիմանկարի վերոհիշյալ բոլոր կողմերով  
հիմնականում նման լինելով իրար, հայկական հին  
բանահյուսության մեջ տեղ գտած վիպական թշնա-  
միները միաժամանակ տարբերվում են մեկը մյուսից:  
Յուրաքանչյուրը նրանցից ժողովրդի կողմից պատ-  
կերված է իր ուրույն և ինքնուրույն երանգով, իր  
անձնական, միայն իրեն հատուկ գծերով: Մեկը նրան-  
ցից քսու է ու անինքնասեր, մյուսը՝ մորթապաշտ,  
երրորդը զերծ չէ որոշ ասպետական գծերից, չորրոր-  
դը պարզամիտ է կամ հիմար: Մեկի մեջ ընդգըծ-  
ված է բռնակալությունը, մյուսը՝ հատկապես աչքի  
է ընկնում իր խարդախ բնութքով, երրորդի մոտ շեշ-  
տըված է չարությունն ու արյունուշտությունը:

Օրինակներով տեսնենք, թե ովքե՞ր են եղել հայ ժո-  
ղովրդի թշնամիները, ինչպես է նա բնութագրել դը-  
րանց իր բանավոր ստեղծագործության մեջ, և ինչ  
կապ ու առնչություն ունեն դրանք իրենց պատմա-  
կան նախատիպերի հետ:

Կանգ առնենք նաև այդ թշնամիների համեմատա-  
բար ավելի լրիվ ու ամրողջական բանահյուսական  
կերպարների վրա:

Հայկական հին բանահյուսության մեջ այս տեսա-  
կետից առաջին հերթին աչքի է ընկնում ասորեստա-  
նյան բռնակալ Տիտանյան Բելը, հայ ժողովրդի նախ-  
նի դյուցազն Հայկի ախոյանը: Նրա կերպարը գծա-  
դրված է հայ ավանդական բանահյուսության հնա-

գույն ստեղծագործություններից մեկի մեջ («Հայկի և Բելի» առասպելում), որ հասել է մեզ՝ Մ. Խորենացու, Սեբեոսի (Անանուն) մշակումներով, ինչպես նաև մի քանի բուն ժողովրդական պատառիկներով, դրի առնված 19-րդ դարի վերջերին Վանա լճի շրջակայքում:

Բելի առաջին բնորոշ հատկությունը, ըստ ժողովրդական առասպելի, բոնակալությունն է։ Նա չի ճանաչում ուրիշի անկախությունը, ձգտում է իշխել բոլորին։ Առասպելի պատումներից մեկի (Մ. Խորենացու) համեմատ՝ Բելը իրեն է ենթարկում երկրի երեսին տարածված բոլոր ցեղերին ու սրանց առաջնորդներին. «բռնտնալ ունել զամենայն երկիր»։ Զանդուրժելով Հայկի ազատասիրությունը, նա ուղղում է ուժով հնազանդեցնել նրան իրեն։ Առասպելաշեն ժողովուրդը պատմում է, թե ինչպես Բելը իր «յանձուգն և անձունի ամբոխի» դրությամբ, «որպէս յորձան ինչ սաստիկ ընդ զառի վայր հեղեղեալ» շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները՝ նրա երկիրը նվաճելու համար։<sup>1</sup>

Իբրև իսկական բռնակալ, Բելը գոռող է ու ամրաբտավան։ Անա թե ինչ է ասում նրա մասին ժողովրդական առասպելի մի այլ պատում (Սեբեոս—Անանուն)։ «Եւ Բէլն Տիտանեան ի վեր կարծէր դինքն քան զամենայն ազգս մարդկան՝ զիւրն ոչ ճանաչելով զբնութիւն, այլ զամենայն ազգս մարդկան ի ծառայութիւն իւր կոչէր»։ Ըստ նույն պատումի՝ Բելն

<sup>1</sup> Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 32—33 (գիրք Ա., գլուխ Ժ. և ԺԱ.)

այնքան է հպարտանում և ամբարտավանանում, որ՝  
«կանգնեաց զպատկերն իւր, եւ ետ երկիր պագանել  
իբրև աստուծոյ, և զոհս մատուցանել»:<sup>1</sup>

Իրեւ դյուցաղն և հսկա, Բելն օժտված է Փիզիկա-  
կան մեծ ուժով, «հզօր զօրութեամբ»: Սակայն, չնա-  
յած իր այդ ուժին, նա զուրկ է հերոսությունից ու  
խիղախությունից, վախկոտ է ու փոքրոգի: Թշնամու  
գիմադրական զորությունը տեսնելով, զարհուրում է  
ու ետ քաշվում. նա իր ամբողջ հույսը դնում է իր  
զենքերի և «բազմամբոխ», «լեռնադեղ» ու «խոլ» հսկա-  
ների վրա, խուսափելով դեմ հանդիման կովի դուրս  
գալու Հայկի հետ:

Ըստ Ժողովրդական առասպելի՝ Բելը ոչ միայն  
բռնակալ է, ամբարտավան, վախկոտ ու փոքրոգի, այլև  
անձոռնի ու անհեղեղ, գրավչությունից ու գեղեցկու-  
թյունից բոլորովին զուրկ մի մարդ. «հաստավիզ» է  
ու «հաստամարմին», կատարյալ «մի մսեղեն արձան»:

Բելի կերպարի պատմական հիմքը հանդիսացել են  
ասորա-բարելական աշխարհակաները, որոնք մեր  
թվականությունից տակավին շատ առաջ (7-րդ և  
6-րդ դարեր) տեսական ու համառ մարտեր են մղել  
Հայաստանի նախարնիկ ուրարտական ցեղերի դեմ՝  
նրանց երկիրը նվաճելու համար: Հայոց առասպելի  
հսկա Բելն այդ նվաճողների արձագանքն է ոչ միայն  
իր գործով, այլև անունով: Պատմությունից հայտնի  
է, որ ասորա-բարելական աշխարհակաների մեջ եղել  
է նաև Բել անունով մի թագավոր:<sup>2</sup> Ուրարտական

<sup>1</sup> Սերես, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913 թ., էջ 2, 4:

<sup>2</sup> Մ. Արեղյան, Հայ ժողովրդական առասպելները, Վաղար-  
շապատ, 1901 թ., էջ 257:

Ժողովրդի հոգևոր կուլտուրայի մի շարք այլ հուշաբ-  
ձանների հետ, սեփականելով նաև «Հայկի և Բելի»  
հին առասպելը, հայ ժողովուրդը յուրացրել, աղքայ-  
նացրել է այն՝ ուրարտացոց թշնամի աշխարհակալ  
Բելին դարձնելով իր աղքային առաջին հերոս՝ դյու-  
ցազն Հայկի ախոյանը: Ժողովրդական բանահյուսու-  
թյան մեջ նկատվող մի երեսույթ է դա, երբ ժողո-  
վուրդն իր ցանկությունների և պատկերացումների հա-  
մեմատ, երբեմն, այլափոխում է պատմական որևէ  
դեմք, արտահայտելով նրա մեջ և նրա միջոցով իր  
հույզերն ու մտորումները, իր համակրանքն ու հա-  
կակրանքը, իր պայքարն ու հաղթանակը:

Չնայած այն հանդամանքին, որ Բելի կերպարը  
մեղ հասել է հիմնականում ոչ թե բուն ժողովրդական  
պատումներով, այլ Խորենացու և Սեբեոսի գրական  
մշակումներով, այնուամենայնիվ, նրա վրա կարելի  
է նկատել ժողովրդական բանահյուսության համար  
բնորոշ գեղարվեստական խոսքի մի քանի հնարների  
հետքերը: Այդպիսիք են, օրինակ, Բելին տրվող մակ-  
դիրներից ու ածականներից մի երկուսը, նրան և նրա  
ամբոխը բնութագրող որոշ պատկերներն ու համեմա-  
տությունները, Բելի դիմանկարի այս կամ այն ուրույն  
գիծը տվող սեղմ ու խոսուն բնութագրականները և  
այլն:

Բելից ավելի ամբողջական ու լրիվ է հայկական  
բանահյուսության մեջ Հայաստանի հին թշնամինե-  
րից մեկի՝ պարսից Շապուհ արքայի կերպարը: Նրա  
մասին հայ ժողովուրդը հյուսել է բավական թվով  
զրույցներ ու ավանդություններ, որոնք հասել են մեղ  
մասամբ հայոց մի քանի հին պատմիչների (Փ. Բյու-

դանդ, Մ. Կաղանկատուացի) միջոցով, մասամբ էլ ժողովրդի բանավոր ավանդությամբ։ Այդ զրույցների ու ավանդությունների մեջ, առաջին հերթին, ցայտուն կերպով դրսեորդած է Շապուհի բռնակալական, կողոպտիչ էությունը։ Առանձնապես բնորոշ է այս տեսակետից դրանցից մեկը, որ բերված է Բյուզանդի Պատմության մեջ։ Լսելով հայոց Տիրան թագավորի աղնը ըվաղարմ ու զեղեցիկ—«ճարտուկ ճանձկեն» ձիու համբավը, Շապուհ արքան որոշում է խլել այն։ Նա թուղթ է ուղարկում Տիրանին՝ պահանջելով նրա նժույզը։ Դժվարանալով բաժանվել սիրեցյալ կենդանուց, միաժամանակ խուսափելով հնարավոր բարդություններից, հայոց թագավորն ուղարկում է Շապուհին մի ուրիշ ձի՝ «զնոյն գոյն, զնոյն նշան, զնոյն սլատկեր, բաց ի մեծութենէ» զի այնչափ ուրեք ոչ գտանէր»։ Իմանալով բանի էությունը՝ գաղաղած Շապուհը զոռով խլում է Տիրանից նրա «ճարտուկ ճանձկենը»։<sup>1</sup>

Միևնույն զրույցի մեջ ցայտուն կերպով դրսեորդած է նաև Շապուհի արյունոռուշտ քնավորությունը։ Ժողովուրդը պատմում է, թէ ինչպես նա, Տիրանի ձին խլելոց հետո, չբավարարվելով զրանով, խարել է տալիս նրա զույգ աչքերը. «Եւ ասէ Վարադ. — Աղէ՝ տեսմէք ածուղ, որով երկաթ շողասցուք, զի զաչս խարեսցուք զարքայիս Հայոց»։ «... Եւ անզրէն բերին ածուղ, որով խարէին զաչսն Տիրանայ»։<sup>2</sup>

Մի ուրիշ տեղ ժողովուրդն արձանագրել է Շապուհի դավագիր ու խարդախ լինելը. Հարասելով ռամկա-

<sup>1</sup> Փ. Թիւզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 73—83։

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 82։

կան զրույցին, Բյուզանդը պատմում է, թե ինչպես  
նա, չկարողանալով ընկճել հայոց Արշակ թագավորին  
ուղամի դաշտում, դիմում է խորամանկության: Հաշ-  
տության դաշինք կռելու պատրիակով, «մեծաւ աղա-  
չանօք և պատարագօք, հրովարտակօք և սիրով» կան-  
չում է իր մոտ Արշակին և խոստանում՝ «յայսմ հետէ»  
«իբրև զհայը և զորդի» լինել իրար հետ և «խաղաղու-  
թիւն ու բարեկամութիւն մեծ» հաստատել իրար մեջ:  
Թե ինչպես նա, այնուհետեւ, Արշակի խնդիրքով, հա-  
վատարմության երդում է տալիս նրան՝ «ըստ օրինացն  
հաւատարիմ երդմանց թագաւորութեանն Պարսից...»,  
և վերջում, նենգորեն զրժում է իր երդումը, դավա-  
դրաբար պատուհասելով Արշակին «իբրև զծառայ իւր»  
և կարգադրելով՝ շղթայակապ բանտարկել նրան Ան-  
հուշ բերդում:<sup>1</sup>

Արձանագրելով թշնամու բացասական հատկություն-  
ները, ժողովուրդը չի փակում իր աչքերը նրա առա-  
վելությունների հանդեպ:

Զնայած իր բանակալ ու արյունուշաւ, խարդախ  
ու դավադիր բնութքին, Շապուհ արքան գիտե գնա-  
հատել թշնամու արժանիքները: Դործով համոզվելով  
իր ախոյանի՝ Մուշեղ Մամիկոնյանի թե ուազմական  
և թե հոգեկան անուբանալի արժանիքների մեջ, հատ-  
կապես կաշառվելով իր կանանց նկատմամբ Մուշեղի  
ցուցաբերած՝ հերոսին վայել բացառիկ մեծահոգու-  
թյունից ու վեհանձնությունից,<sup>2</sup> նա, ըստ ժողովրդա-

<sup>1</sup> Փ. Քիւզանք, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 248—250:

<sup>2</sup> Երբ Շապուհը հաղիվ ճողոսվրելով նրա ձեռքից, փախուստի  
է դիմում՝ գերի թողնելով իր կանանց, Մուշեղը վեհանձնաբար

կան զրույցի, իր գինու գալաթի վրա նկարել է տաւ-  
լիս հայոց զորավարին իր սպիտակ նժույգի վրա, և  
ամեն անգամ, ուրախության ժամին, ձեռքն առնելով  
գինու գալաթը, հիշում է Մուշեղին և առում. «Ճեր-  
մակաձին գինի արբցէ»:

Բելի նման՝ Շապուհ արքան ևս ունի տպեղ և այ-  
լանդակ արտաքին: Ժողովրդական վիպասանն այստեղ  
կատարելապես բաց է թողել իր երեակայության սան-  
ձերը և վրձինի առել իր ներկապանակի ամենամռայլ  
գույները: Նկարագրելով Շապուհի և նրա վիպական  
գինակից Լոռվա Համզա փահլանի արտաքինը, վի-  
պասանն ասում է.

1/6349

«Եղ Շըրըգան Խորասականի<sup>1</sup> վերին ունք  
Էնքան էր կախվի, որ եկեր էր հասե վըր սրտին,  
Ու չանգալով կապեր էր,  
Ու զարկե ետևանց վըր պառեկին:  
Ըն մըկել էռովա Հըմզա փահլանի ներքեկի մռութ՝  
Զգետին կ'ավլեր ու կ'երթեր»:<sup>2</sup>

Շապուհ արքայի պատմական նախատիպը հանդի-  
սացել է Պարսից Սասանյան հարստության թագավոր-  
ներից Շապուհ Զ-րդը, որը հայ պատմական գրակա-  
նության մեջ հիշվում է՝ Շապուհ Երկայնակյաց, Շա-  
պուհ Վարագ անուններով, և որը պատմության մեջ  
աչքի է ընկել Հայաստանի նկատմամբ ունեցած իր

մերադրձնում է նրանց իրենց տիրոջը: (Բիւղանդ, էջ 282—  
284):

<sup>1</sup> Շըրըգան Խորասական=Խորասանի Շապուհ արքա:

<sup>2</sup> Կ. Մրգանաշյանց, Պրոց-Բրոց և Սասունցի Քաղիք կամ  
Մհերի դուռ, Կ. Գոլիս, 1874, էջ 173—174.

աշխարհակալական ձգտումներով։ Փ. Բյուզանդն իր  
 Պատմության մեջ մանրամասն նկարագրում է այն ա-  
 վերն ու ավարը, հաղածանքն ու արյունհեղությու-  
 նը, որ կատարվել է Հայաստանում Շապուհի ձեռքով։  
 Թե ինչպես նա իր անթիվ ու անհամար զորքերով և  
 փղերի մեծ բանակով արշավել է հայոց աշխարհի վրա.  
 «Յայնմ ժամանակի թագաւորն Պարսից Շապուհ, ժո-  
 ղովիաց զզօրս իւր անթիւ և անհամար իբրև զաւազ  
 առ ափն ծովու և փիզս բազումս, զի ոչ զոյր նոցա  
 թիւ։ ... Եւ հրաման տայր թագաւորն զօրացն՝ ընդ  
 երիս տեղիս խաղալ մտանել արշաւել յաշխարհն Հա-  
 յոց»։ Թե ինչպես նրա զորքերը ավերել ու կողոպտել  
 են Հայաստանը. «Ապա լցան, սփռեցան, ծաւալեցան  
 ընդ ամենայն երկիրն Հայոց, աւար առնուլ, քանդել,  
 աւերել զերկիրն ամենայն Հայոց աշխարհին»։ Թե ինչ-  
 պես նրանք սրի են քաշել խաղաղ ընակչությանը,  
 ցցերի հանել կանոնց ու երեխաներին. «Այրացաւեր  
 առնէին, և զանթիւ մարդիկ արկանէին ի սուր սու-  
 սերի իւրեանց, զկանայս և զմանկաի հանէին ընդ ցից  
 ուայլից...։ ... Եւ զարանց բազմութիւնս տային ի կո-  
 խումն փղաց... զերութիւնն վարէին և զբազում ամուրս  
 քանդէին, և զբերդս աւերէին զամուրս», և այլն և  
 այլն։<sup>1</sup>

Հայոց թագավորի ձին ըսնությամբ խլելու և դա-  
 ժանորեն նրա զույգ աչքերը կուրացնել տալու, Արշա-  
 կին դավադրաբար զերելու ու բանտարկել տալու, և  
 նման, բուն վիալական ընույթի, մի շարք այլ դրվագ-  
 ների մեջ հայ ժողովուրդն անդրադարձել է Շապուհ

<sup>1</sup> Փ. Թիւզանդ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 212, 219, 228 և այլն

Հ-րդի, ինչպես նաև նրա նախորդ ու հաջորդ պարսից մի քանի այլ թագավորների (Շապուհ Առաջին, Խոսրով, Հաղկերտ, Պերող և այլն) աշխարհակալական, արյունաբըռ գործունեությունը, թագավորներ, որոնք իրենց կատարած գործով երբեմն էլ անուններով հիշեցրել են Շապուհին և նրա արարքները:

Ժողովրդական բանահյուսության համար սովորական մի երեսույթ է դա, երբ ժողովուրդը՝ իրենց կատարած գործի, անունների նմանության և կամ մոռացության պատճառով՝ նույնացնում է իրար հետ, ձուլում է իրար երկու և ավելի պատմական դեմքեր, որոնք ջոկ-ջոկ և տարբեր ժամանակ նյութ են դարձել նրա բանավոր ստեղծագործության համար։

Շապուհի կերպարը Բելի համեմատությամբ, ըստ նրա մասին վիպող վերոհիշյալ և մի քանի այլ զբույցների ու ավանդությունների, ունի ավելի ժողովրդական-բանահյուսական բնույթ ու երանդ ոչ միայն իր հասարակական, բարոյական և ֆիզիկական բովանդակությամբ, իր պատմական կողմով, այլև այն արտահայտչական միջոցներով, որոնցով բացահայտված է նաև նրա շնորհիվ այն հանգամանքի, որ խնդրու առարկա զբույցներն ու ավանդությունները մեջ բերող մեր պատմիչները (Բյուզանդ և այլն) տվյալ դեպքում ավելի հարազատորեն են վերատադրել իրենց ձեռքի տակ եղած ժողովրդական սկզբնաղբյուրները, քան այդ արել են Խորենացին ու Սեբեսու Բելի կերպարի նըկատմամբ։ Ժողովրդական բնույթ ունի, նախ և առաջ, այն լիզուն ու ոճը (պարզ, կենդանի ու պատկերավոր), որով պատմվում է Շապուհի գործի ու անձի մասին։ Ժողովրդական-բանահյուսական ծագում ունի այնու-

ճետև Շապուհի արարքների և մասնավորապես Նրա արտաքինի նկարագրության մեջ նկատվող չափազանցությունը։ Հայտնի է, որ ժողովուրդն իր բանավոր ստեղծագործության մեջ՝ հերոսների գրական կողմերը և թշնամիների բացասականն ավելի ցայտուն ու ընդուժված դարձնելու համար, սովորաբար, առատորեն կիրառում է չափազանցությունն իրեւ տրտահայտչական մի միջոց, դրսեորելով դրանով՝ առաջին դեպքում իր համակրանքն ու սերը, ժողովրդի ուժի ու հզորության գաղափարը, իսկ երկրորդ դեպքում՝ իր անսահման ատելությունն ու արհամարհանքը։

Հայկական բանահյուսության մեջ ստեղծված թըշնամու բազմաթիվ կերպարների շարքում իր ամբողջականությամբ ու վերջավորվածությամբ բացառիկ տեղ է գրավում հայ ժողովրդի ազգային հերոս՝ Սասունցի Դավթի անհաշտ ախոյան, Մսրա Մելիքի կերպարը։ Նրա դիմանկարը բազմակողմանի կերպով գծագրված է «Սասոնա Ծոեր» ժողովրդական էպոսի մի քանի տասնյակ պատումներում։ Դա իսկական գեղարվեստական-վիպական մի ընդհանրացում է, տիպիկական մի կերպար, ժողովրդի կողմից բացահայտված համապատասխան տիպիկական հանդամանքներում։

Մսրա Մելիքի մեջ խտացված են օտարերկրյա բըռնակալներին հատուկ բոլոր բնորոշ հատկությունները և, առաջին հերթին, նրանց նվաճողական էությունը։ Վեհպի անխտիր բոլոր պատումներում Մելիքը հանդես է գալիս իրեւ իսկական մի տիրան։ Մերթ նա ուղարկում է իր ստորագրյալներին Սասուն՝ յոթ տարվա «խարջ ու խարաջ» բերելու այնտեղից։ Մերթ կարգադրություն է անում իր մարդկանց գնալ և ավելի

սասունցոց սրբատեղին, Դավթի կողմից վերաշխնված  
Մարութա վանքը, ասելով.

«Թալեք վըր էնու Խաչ Մարութա Բանձր Աստվարածին,  
Կորեք քառուն վարդապետ մեջ էնունց խորանին,  
Կորեք քառուն սարկավաք մեջ էնունց սենեկին,  
Կորեք վիզն լուսրարին»:

• • • • • • • • • • • • •  
«Որ ինոնց թագավորութեն չըազմանա»:<sup>1</sup>

Մերթ զորահավաք հայտարարելով՝ պատերազմի  
է դուրս գալիս իր հարկային ծանր լուծը թոթափել  
ցանկացող ըմբոստ սասունցիների դեմ:

Բոնակալ լինելով Մելիքը, ըստ ժողովրդական վե-  
պի, միաժամանակ նաև խարդախ է։ Վեպը պատմում  
է, թե ինչպես նա, քաջություն չունենալով անձամբ  
մենամարտի ելնելու Դավթի դեմ, նենգորեն խաբում  
է նրան՝ նետելով նախօրոք պատրաստել տված հորի  
մեջ։

Մելիքի բնավորության մյուս բնորոշ հատկու-  
թյունը արյունոշությունն է։ Վեպի գրեթե բոլոր  
պատումներում արձանագրված է, թե ինչպես նա, մա-  
նուկ Դավթի մեջ իր ապագա ախոյանին գուշակելով՝  
ուզում է սպանել տալ նրան և խմել նրա արյունը։  
Ահա թե ինչ է ասում այդ առթիվ վիպասաններից  
մեկը.

---

<sup>1</sup> «Սասնա Ծռեր», Ա. հատոր. խմբագրեց պրոֆ. դոկտ. Մանուկ  
Աբեղյան, աշխատակցությամբ Կարապետ Մ.-Օհանջանյանի։ Երե-  
վան, 1936 թ., էջ 965, 1049։

«Իլավ, ինչ էրավ Մելիք. —  
 Բիրից [=Դավթին], տվըց Բաթմանա բուղին,<sup>1</sup>  
 Զարբախտ Թամին գկքերաց,  
 Թասլիմ էրաց, ասաց. — Էսա կը տանըք,  
 Կերթըք Բաթմանա կարմնջի վերեն,  
 Կը սպանըք, ձի մեկ շուշա էրուն կը բիրիք,  
 Էնու ջանդակ կը թալըք գիտ, կ'երթա.  
 Էնու էրուն կը բիրիք,  
 Որ ևս խմիմ, իմ սիրտ խոմըա»:<sup>2</sup>

Մսրա Մելիքի բարոյական աշխարհի բնութագիրն  
 ամ բողջացնելու համար պետք է նշել նաև նրա ամ-  
 բարտավանությունն ու վախկոտությունը: Հույս դրած

1 Բաթմանա Բուղայի անվան ու անձնավորության մեջ, վի-  
 պականորեն վերափոխված, արձագանք է գտել պատմական հայտ-  
 նի արյունաբերու Բուղս ռստիկանի անունն ու գործը, այն Բու-  
 ղայի, որը Բաղդադի խալիֆի հանձնարարությամբ, 200,000-անոց  
 բանակով օճշ միվն գալավ հայաստան (նախ՝ ծարոն Սասուն և  
 առա մյուս գավառները), հերթով ճնշում է այստեղ ծագած ժո-  
 ղովրդական ապստամբությունները, անինա՝ կոտորում, զերեվա-  
 րում նրա բնակչիններին և նրի ու սրի մատնում ողջ երկիրը, այն  
 Բուղայի, որի մասին ժամանակակից պատմիչ Հովհաննես Կաթո-  
 ղիկոսը գրում է. «... իբրև զկայծակն վայլակնար զաշխարհն  
 արարեալ... ասպատակ զդօրս իւր սփռէ ընդ ծործորս 'ի լերինն  
 Տորոսի և ընդ երեսս գաւառին Եւ նախ զընակնալոն 'ի խոխոնն  
 լերինն՝ զորս ըմբռնէինն՝ տապաստ երկրի տային անողորմ սրով.  
 իսկ զգաւառին հեծելագունդն զգունիկս զոմանս սրոյ ճարակ տա-  
 յին, և զայլս ձերբակալս արարեալ առ բռնաւորն հասուցանէին  
 տոռամբք զնոսա քարշեալ: Իսկ զանձնագեղս և զերեսաւորս և  
 զգունեանս արտաքոյ այլոցն տրոնեալ վասն անօրէն յօրէնս իւ-  
 րեանց զարձուցանելոյ ըստ ամիբապեախն հրամանի. և զայլս ևս  
 մնացականս առ 'ի նոցանէ հրամայէր սրով վատնելը (Յովհ. Կա-  
 թողիկոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912 թ., էջ 119):

2 «Սասնա Ծռեր», Ա. հատոր, էջ 337:

իր անթիվ ու անհամար զորքի վրա, Մելիքը, ըստ  
 ժողովրդական վեպի, ինքնագոն գոռողամտությամբ  
 մեծախոսում է՝ Սասունն ավերելու և նրա տեղ «Նոր  
 քաղաք շինելու», «բռնտան ցանելու», այն «Ճրով, Ճրճ-  
 ղեղով ընցուցելու» և կամ հրկիղելու՝ «կրակելու» մա-  
 սին։<sup>1</sup> Նրա՝ բռնակալին հատուկ ամբարտավանությունն  
 ու մեծամտությունը մաղաչափ չի մեղմանում անգամ  
 այն ժամանակ, երբ իր բազմամբոյն զորքը լավ ճաշա-  
 կում է Դավթի հարվածների համը, երբ նրա «խազար-  
 խազար»-անոց բանակը ոչ միայն չի կարողանում ա-  
 վերել Սասունը, այլև ջարդ ու փշուր է լինում Դավ-  
 թի թուր Կայծակուց և արորվում հրեղեն Քուռկիկ Զա-  
 լալու ոտների տակ։ Ժողովուրդը պատմում է, թե ինչ-  
 պես տեսնելով սեփական վրանում իրեն մենամարտի  
 կոչելու եկած անվեհեր Դավթին, Մելիքը ծաղբում է  
 նրան, ասելով.

### «Սասմա Շաղկմակիրն իլլի»

Խառ Մարամելքին կրիվ տ' են իւ։

Էսաց՝ կ' ըլնիմ, կ' ուտիմ ակռաստ, ճաշուն չմնա.

Որ ուտիմ ճաշ, խրամենցըն չմնա.

Որ ուտիմ խրամենցըն, ընթրիսըն չմնա։<sup>2</sup>

Գոռողամիտ բռնակալը հույս ունի մի վչելով թոցը-  
 նել տեղից իր ախոյանին և կամ՝ թրի (գուրզի) մի  
 հարվածով վերջացնել նրա հաշիվը։ Սակայն, վեպի  
 շարունակության մեջ, երբ Մելիքի պարծենկոտ խոս-  
 քերն ու փորձերն անհաջողության են մատնվում, երբ

<sup>1</sup> «Սասմա Ծոեր», Ա. հատոր, էջ 17, 908, 1056.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 200.

նա ոչ միայն մի փշելով չի կարողանում շարժել իսկ տեղից Դավթին, այլև երեք կը կնվող հարվածներով չի հաջողում սպանել նրան, վախը սողոսկում է նրա սիրութը: Երբեմնի գոռող ու ամբարտավան բռնակալը, ըստ ժողովրդական վեպի, զանում է վախսկոտ ու ողորմելի մի էակ: Նա սկսում է թախանձել իր ախոյանին, որպեսզի վերջինս իր հարվածը հասցնելուց առաջ, թույլ տա նրան պատսպարվելու՝ «Ճիռ փորի տակ», «Քառսուն գաղ խորի մեջ», «Քառսուն ջաղջի քարի տակ», «Քառսուն դրզած գոմշու կաշու տակ» և այլն<sup>1</sup>

Բացի վերոհիշյալ բոլոր հատկություններից, որոնք, հիմնականում, կարելի է գտնել նաև մյուս թշնամիների մոտ, Մելիքն ունի նաև իրեն անհատական սեփականությունը կազմող բնակլորության մի քանի այլ հատկություններ ևս: Այդպիսի հատկություններից են նրա՝ մորթապաշտությունը, հարազատ մորը տված խոսքը չհարգելը և այլն: Մելիքը, առանց ամաչելու, թույլ է տալիս, որ կանայք (մայրն ու քույրը) իր համար գթություն հայցեն Դավթից, խնդրեն նրան զիջելու իրեն վերապահված երեք զարկերից երկուսը: Նա խախտում է հարազատ մորը տված խոստումը՝ մանուկ Դավթին չսպանելու մասին, և պատվիրում է իր մարդկանց Սասուն տանելու պատրվակով ճանապարհին սպանել նրան:<sup>2</sup>

Մելիքի ներքինի համեմատ է և նրա արտաքինը: «Սասնա Ծռեր» էպոսի մեր ձեռքի տակ եղած մի շարք վարիանտներում բնորոշ ակնարկներ կան այդ առթիվ:

<sup>1</sup> «Սասնա Ծռեր», Ա. հատոր, էջ 30, 281 և այլն:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 30, 65, 93, 202, 336 և այլն:

Տարբեր տեղերում հիշատակվում են՝ նրա արյունակալած գայլի աչքերը, ճարպակալած, ուռած ու տողած մարմինը, նրա արհեստական, մի երկու մազից բաղկացած ցանցառ մորուքը և այլն:<sup>1</sup>

Մորա Մելիքի անձնավորության մեջ արձագանք են գտել պատմական Բաղդադի խալիֆների (արաբական ամիրապետների), արաբական հայտնի ոստիկաններ Յուսուփի ու Բուղայի, ինչպես նաև 13-րդ դարի սկզբներին Հարավային և Արևմտյան Հայաստանը նվաճած Եգիպտոսի (=Մորա) թագավորների (=մելիքների) ավերիչ գործունեությունը, նրանց անձնական և հասարակական բնորոշ ու տիպական հատկությունները:<sup>2</sup>

Ի տարբերություն Բելի և Շապուհի, որոնք անհատ հեղինակների կողմից գրական մշակման ենթարկված լինելու շնորհիվ պահպանել են իրենց մեջ ժողովրդական բանահյուսության հատուկ առանձին արտահայտչական միջոցները միայն (երբեմն ավելի, երբեմն պակաս), Մելիքի կերպարն սկզբից մինչև վերջ կերտված է հիշյալ արտահայտչական միջոցներով, որովհետև նրա մասին մեզ վիպում է ինքը ժողովուրդը իր կենդանի ու գունեղ լեզվով ու ոճով, իր բազմաթիվ ու բազմերանգ բարբառներով։ Նրա հոգեկան ու ֆիզիկական այս կամ այն հատկությունն ընդգծելու համար վիպասանները տեղին և ժամանակին գործ են ածում ժողովրդական լեզվին հատուկ մակդիրներն ու պատ-

<sup>1</sup> «Մասնա Ծռեր», Ա. հատոր, Էջ 811 և այլն։

<sup>2</sup> Ա. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Թէֆլոն, 1908 թ., էջ 70, 72, 80—81, 86—88։

կերավոր արտահայտությունները:<sup>1</sup> Նրա բնությունն  
ու էությունն առավել ցայտուն դարձնելու նպատակով  
նրանք դիմում են ժողովրդական բանահյուսության  
համար բնորոշ հակադրության միջոցին, ֆիզիկապես  
ուժեղ, բայց ծանրաշարժ, քնկուտ ու անհրապույր, գա-  
վաղիք ու խարդախ, ամբարտավան ու փոքրողի Մե-  
լիքին, հակադրելով՝ տեղովը կյանք ու կրակ, խիզախ  
ու անվեհեր, շիտակ ու աղնիվ Դավթին, և այլն:

Հայկական վիպական բանահյուսության մեջ նկատ-  
տելի արձագանք է գտել արևելյան ամենակատաղի ու  
արյունաբու բանակալներից մեկի՝ Լենկ-Թեմուրի  
կերպարը, այն մարդու, որի հեծելազորի ասպատա-  
կումներից՝ ասիական շատ ուրիշ երկրների հետ, չա-  
րաչար տուժել է նաև հայոց աշխարհը, որի հրոսակ-  
ների զոհն են դարձել տասնյակ հազարավոր հայեր,  
որի թելաղբանքով Հայաստանից լունազրավիճել ու  
տարվել են այնտեղ եղած ձեռագիր մատյանները, և  
այլն և այլն: Հայ ժողովուրդը նրա մասին հորինել է  
զրույցների ու ավանդությունների մի ամբողջ շարան:  
Ըստ այդ զրույցների ու ավանդությունների՝ Լենկ-Թե-  
մուրի համար ավելին ու ավարը մի տեսակ բնական պա-  
հանջ է, անսանձ մի կիրք: Դա ավելի շուտ երկոտանի

<sup>1</sup> Թե՛ Մելիքին և թե՛ մյուս օտարերկրյա բռնակալներին աըր-  
վող իր առավել ուժեղ մակրիքներն ու պատկերավոր արտահայ-  
տությունները ժողովուրդը հաճախ փոխ է առնում իր գիցարա-  
նության գինարանից, իրեն թշնամի ու հակառակ՝ բնության չար  
ուժերի անձնավորում զանազան անհեղեղ հսկաների ու վայրի  
գաղանների անունից (վիշապ, դե, հրեշ, վարադ և այլն), դրա-  
նով իսկ, վերջիններիս հատկություններն ու նրանց նկատմամբ  
իր մեջ եղած ատելությունը փոխանցելով իր նոր թշնամիներին:

մի հրեշ է, քան սովորական մարդ, փոթորկի, հեղեղի, մորեխի կամ կայծակի պես մի բան, որը հոշոտում է ամեն մի կենդանի շունչ, այրում, չորացնում իր ճանապարհին հանդիպող յուրաքանչյուր թուփ ու կանաչ: «Լենկթամուր էլավ յուր ասքյար ժողովից, խինդ խարիր խազար ջան, Թիլվուռ քյաղքեն բոնից ընչանք երուսաղիմ քյանդից խայոց ժամիր, էլսիր բոնից խայիր, կնաց էլավ Երուսաղմ»,—այսպիս է սկսում իր գրույցը տաճկահայ գեղջուկ՝ մի բանասաց:<sup>1</sup>

«Լենկթամուր քանդկով, ջարդելով էկավ մեր Մոկաց երկիր. էկավ մեկ գեղըմ, էնուռ սնոր նատավ»,—ձայնակցում է նրան իր հայրենակիցներից մեկը:<sup>2</sup>

Մի երրորդ տեղ, նկարագրվում է Լենկ-Թեմուրի 12,000-անոց բանակի հարձակումը Հայաստանի վրա, վերջինիս ընակչության գերեվարումը և անթիվ ու անհամար վանքերի ու տաճարների ավերումը նրա կողմից:<sup>3</sup>

Առանձնապիս ընորոշ է այս տեսակետից հետեւալ գրույցը, որ ասել են նախկին Զիվանշիրի գալանի բնակիչները: Անխնայորեն ավերելով իր ճանապարհին լնկած գյուղերն ու քաղաքները և քրիստոնյաների գանգերից մինարեթներ կառուցելով, Լենկ-Թեմուրը Միջին Ասիայի տափաստաններից գալս հանում է Սյունյաց աշխարհի ստիմանները: Նա քար ու քանդ է անում ողջ Սյունիքը, ավերում բոլոր սրբատեղիները, կողոպտում, սպանում և գերեվարում նրա

1 Գ. Ճռվսեփյան, Փշանքներ ժողովրդական բանահյուսությունից, Թիֆլիս, 1892 թ., էջ 35:

2 Նույն տեղը, էջ 36:

3 Гакстгаязен, Закавказский край, մասն I, էջ 158—160:

բնակիչներին։ Սյունիքում իր արյունոտ հանդեսը  
վերջացնելուց հետո, նա ճանապարհ է լնկնում զեպի  
Տաճկահայաստան՝ ավերելով ու ավարելով գալիս հաս-  
նում է մինչև Վան։ Հագենալու համար հայերի, հատ-  
կապես հոգեորականների, արյունով, Թեմուրը կանչել  
է տալիս իր մոտ բոլոր հայ քահանաներին ու վար-  
դապետներին, և կատաղության պահին հրամայում  
մեկը մյուսի ետևից՝ կախել բոլորին։ Այնուհետև նա  
նույն կերպ վարվում է նաև աշխարհականների հետ։<sup>1</sup>

Պատմական աղբյուրները պերճախոս կերպով հաս-  
տառում են Հայաստանում Լենկ-Թեմուրի կատա-  
րած ավերածության ու արյունհեղության մասին  
վիպող վերոհիշյալ և բազմաթիվ նման զրույցների  
ու ավանդությունների բովանդակությունը։ «Աւազ  
եւ եղուկ՝ ամենայն Հայոցս զի աւերեցաւ ամե-  
նայն երկիրս. զի յԱրճշոյ մինչեւ ի տունն Վրաց եւ  
մինչ ի Կուր գետն Աղվանից շաղախեցաւ արեամբ  
անմեղաց երկիր ամենայն, չարչարանօք սպանմամբ  
եւ գերութեամբ»,— գրում է այդ առթիվ ժամանակա-  
կից հայ պատմիչ Թովմա Մեծոբեցին։ Նույն պատմի-  
չը, իբրև ականատես, նկարագրելով Հայաստանում  
Լենկ-Թեմուրի կատարած գաղանությունները, գրում  
է. «... հրաման եղեւ ի չար բռնաւորէն զիանայս եւ  
մանկունս առնուլ ի գերութիւն, և զհաւատացեալս եւ  
զանհաւատս ի բերդէն ի վայր ընկենուլ։ Իսկ նոքա  
առ ժամայն կատարեցին զչար հրաման նորա, սկսան  
առ հասարակ զամենեսեան ի վայր ընկենուլ։ Եւ այն-

<sup>1</sup> „Сборник Материалов для описания местностей и пле-  
мен Кавказа“, вып. VII, отд. II, № 64—68 (1889 г.).

քան բարձրացաւ մեռեալն, մինչ զի վերջին անկեալքն  
ոչ մեռանէին, զոր տեսաք աչօք եւ լուաք ականճօք  
մերովք...»:<sup>1</sup>

Հայկական ավանդական բանահյուսության մեջ  
բավական ուժեղ արձագանք է զտել նաև 17-րդ դարի  
արևելյան մի ուրիշ խոշորագույն բռնակալի՝ պարսից  
Շահ-Աբաս Առաջին թագավորի կերպարը. Հայաստանի  
նկատմամբ նրա վարած կործանարար քաղաքականու-  
թյունը, հայ ժողովրդին իր երկրից տեղահան անելը,  
բռնի հավատափոխությունը և այլն. Ժողովուրդը պատ-  
մում է, թե ինչպես իր ծպտյալ շրջագայություններից  
մեկի միջոցին Շահ-Աբասը հանդիպելով մի հայ գեղջ-  
կունու, խնդրում է նրան, ի սեր շահի, մի հավ վա-  
ճառել իրեն. գեղջկունին, չիմանալով, թե ով է իրեն  
հետ խոսողը, հայտնում է նրան, որ շահի սերը չի  
կարող կաշառել իրեն, որովհետեւ, բացի նեղությունից  
ու զրկանքից և հայրենի երկրից տեղահան արվելուց,  
իրենք նրանից ոչ մի լավ բան չեն տեսել ու զգացել:<sup>2</sup>

Թե ինչպես՝ մի անդամ Շահ-Աբասը տեսնելով  
դաշտային աշխատանքից տուն վերադարձող երկայ-  
նամորուս մի հայ քահանայի, կանչում է նրան իր  
մոտ և կարձատե հարց ու փորձից հետո առաջարկում  
հավատափոխ լինել: Ծերունաղարդ քահանան մերժում  
է շահի առաջարկը, պատճառաբանելով իր մեծ տարի-  
քը, որն արգելելու է իրեն կատարելու մուսուլմանա-  
կան կրօնի արարողությունները: Գաղաղած շահը իր

1 Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց, արա-  
րեալ Թովմա վարդապետի Մհծոբեցւոյ, 1860, Փարիզ, էջ 30—32:

2 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղար-  
շապատ, 1884 թ., էջ 123—124:

ձեռքի կացնի մի հարվածով գետին տապալելով ծեռունի քահանային, կարգադրում է անմիջապես թըլպատել նրան։<sup>1</sup>

Շահ-Աբասի ժամանակ Հայաստանում գոյություն ունեցող կոռի ծանրությունն ակնարկելու համար, ժողովուրդն ստեղծել է հետևյալ բնորոշ «առասպելը», որ պահպանվել է ժամանակակից մի պատմիչի մոտ։ «... կի՞ն յդի գոլով՝ այր նորա տանէին կոռ, և ոչ թողուին գնալ ի տուն իւր. և կի՞նն ծնանէր որդի և զարդանայր, և առաքէին զնա՝ կոռն, զի հայրն երթիցէ ի առւն»։ Մեջ բերելով հիշյալ «առասպելը», պատմիչն իր կողմից անմիջապես ավելացնում է. «Զայս առասպելս վասն բազմութեան կոռին ասացին»։<sup>2</sup>

Շահ-Աբասի և նրա օրով Հայաստանում տեղի ունեցած անց ու դարձերի մասին վիպող ժողովրդական վերոհիշյալ և բազմաթիվ այլ պատմվածք-դրույցների բովանդակությունը, հիմնականում, հաստատվում է ժամանակակից պատմիչների վկայություններով։ Այսպես օրինակ, խոսելով պարսից նշանավոր այդ բռնապետի հրամանով Աբարատյան դաշտի հայության բռնի գաղթեցման մասին, Առաքել Դավրիժեցին գրում է. «Եւ հրամայեաց նոցա (իր մարզկանց — Ա. Դ.) շահն... արտասահման արարեալ վարեսցեն, և ոչ թողուցուն ամեննեին շունչ կենդանին... Իրրե զջոլիրս բազմութեան հօտից և անդէոց զառաջեաւ արարեալ բռնութեամբ վարեալ՝ ածեալ բերեալ հասուցին ի գաւառն

<sup>1</sup> Պատմ. Առաքել վրդ. Դաւրիժեցւոյ, - Վաղարշապատ, 1884, էջ 124.

<sup>2</sup> Զաքարեայ Սարկաւագի Պատմագրութիւն, հատոր Ա., էջ 46.

Արարատու, և զլայնանիստ դաշտ նորա լցին ծագէ ի  
ծագ... Եւ այնուհետեւ... կարի սաստիկ տագնապաւ  
նեղէին զժողովուրդն, զոմանս մահու հարուածով գա-  
նելով, և զոմանց զունչս զդուխն կտրեալ ի ձող ցցէին...  
զի փութանակի անցցեն զգետն... Իսկ ողորմելի ժողո-  
վը գրդեանն հայէին յառաջ զանհուն գետն տեսանէին  
իրք զծով՝ որ խեղդէր, և յետուատ զառւըն Պարսից՝  
որ սպանանէր, և ճարակ փախչելոյ ոչ գտանիւր. և  
առ հասարակ աղիողորմ ողբս, և յորդ արտասուս յա-  
շաց հեղեալ առնէին երկրորդ երասխ»:<sup>1</sup>

Նույն պատմիչը խոսելով այն չարչարանքների  
մասին, որ պատճառում է Շահ-Աբասը հայերին՝ նրանց  
զռուվ հավատափոխ անելու համար, զրում է. «Եւ այ-  
նուհետեւ եկն ենաս ի վերայ ողորմելի ժողովրդեանն  
մէզ՝ մառախուղ՝ և խաւար անիմարտելի, զի վաղվա-  
զակի փութացեալ անօրէն դահճացն այսը և անդը  
գտին զամենայն արս ի ժողովրդենէ անտի, կալան՝ և  
ոկտան յանխնայ չարչարել, հարկանել և վիրաւորեր  
կախաղանի, ի շղթայս և ի կոճեղս, ի բանդս և յարգե-  
լանս, սովով և ծարաւով զբազում աւուրս, աղաղակ  
ժողովրդոցն, լալ և կոծ արանց և կանանց ընդ իրեաց  
խառնեալ յերկինս հասանէր»:<sup>2</sup> Այսպիս և ուրիշները:

Բերված օրինակներով չեն սահմանափակվում հայ-  
կական հին բանահյուսության մեջ արձագանք գտած  
թշնամիների վիպական կերպարները: Մեր ձեռքի տակ  
եղած բանահյուսական հարուստ նյութերը, ինչպիս  
տպագիր, նույնպես և անտիալ, լայն հնարավորու-

<sup>1</sup> Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւթիթեցւոյ, Վաղար-  
շապատ, 1884 թ., էջ 28—30:

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 118.

թյուններ են տալիս մեզ կրկնապատկելու և բազմապատկելու դրանց թիվը:

Իր առասպելներում ու զրույցներում, վեպերում ու երգերում հայ ժողովուրդը, երբեմն միայն ակնարկով, երբեմն էլ ավելի հանգամանորեն, հիշատակում է ինչպես վաղ, նույնպես և համեմատաբար ուշ դարերի իր բազմաթիվ ուրիշ մեծ ու փոքր թշնամիներին ևս:

Նա հիշում է՝ մեր թվականությունից մոտ վեց դար առաջ ապրած, Հայաստանի հարևան Մարաց ազգի բոնակալ թագավորներից՝ Աժդահակին, որը քաջություն չունենալով բացեիրաց կովի դուրս դալու հայոց Տիգրան թագավորի դեմ, կեղծ բարեկամություն է հաստատում նրա հետ, կնության առնում նրա քրոջը՝ Տիգրանուհուն, հույս ունենալով վերջինիս օգնությամբ հրավիրել իրեն մոտ Տիգրանին և ճաշի ժամանակ թունավորել նրան։<sup>1</sup>

Ակնարկում է՝ Հռոմի հարկային ծանր լուծը թութափած հայերին վերստին հարկատու գարձնելու նըսպատակով Հայաստան ներխուժած հռոմեական լեզեռների առաջնորդ «ոմն Դոմեգո-ին (հռոմեական հայտնի զորավար Դոմեգիանոս Կորբուլոնին), որն առաջին դարի երկրորդ կեսին արշավելով Հայաստան՝ ավերել է այն։<sup>2</sup>

Պատմում է՝ Հայաստանում օտարազգի բոնակալ ոմն Երվանդի (մեր թվականության 1-ին դարում ապրած, հռոմեական աշխարհակալների գործակալ, Հա-

<sup>1</sup> Ա. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 19'3 թ., էջ 73—79.

<sup>2</sup> Նույն տեղը, էջ 184—185.

զաստանի թշնամի պատմական Հրադամիզդի) կատարած արյունոտ ու չար գործերի մասին, այն մասին, որ նա հայկական գահին տիրելու համար դավադրաբար սպանել է տալիս հայոց Սանատրուկ թագավորին և կոտորում նրա ողջ տոհմը (բացի Արտաշեսից):

Բուն վիպական ձևով է ժողովուրդը պատկերել Երվանդի չարությունը: Լինելով չար աչքի տեր մարդ, նա իր դժնյա հայացքով սարսափի է աղղել բոլորին: Վիպասանների պատմելով՝ արքունի ծառաները նրա արթնանալու միջոցին որձաքարի սալեր են բռնելիս եղել նրա հայացքի դիմաց, որից պայթել են այդ սաշերը: «Բայց ասեն զերուանդայ՝ ըստ հմայից դժնեայ գոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աչալը ջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ, և ի հայեցուածոցն դժնութենէ ասեն պայթել որձաքար վիմացն»:<sup>1</sup>

Վիպում է՝ Հայաստանում (Սասունում) Բաղդադի խալիֆների (=արաբական ամիրապետների) կատարած ավերի ու ավարի մասին, այն խալիֆների, որոնք 7-րդ դարի կեսերին բռնությամբ նվաճելով Հայաստանը և մոտ երկու և կես դար իշխելով այնտեղ, իրենց ոստիկանների ու հարկահանների միջոցով պարքերաբար կողոպտել ու ավերել են երկիրը, գերեվարել ու խոշտանգել նրա բնակիչներին:<sup>2</sup>

Արձանագրում է՝ Սասունցի Դավթի և նրա հայընիքի (Հայաստանի) նկատմամբ Զմշկիկ Սուլթանի

<sup>1</sup> Մ. Խորենացի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913 թ., էջ 161—168.

<sup>2</sup> Գ. Մրկաննեացի, Գրոց-Բրոց, էջ 137 և այլն.

(Բյուղանդական Հռվիաննես Զմշկիկ կայսեր) և Պապը  
Ֆրենկի (Հռոմի պապի) ունեցած թշնամանքը:<sup>1</sup>

Նկարագրում է Պարսից Նազիր Շահի արշավանքը  
Հայաստանի վրա և Թմկաբերդի քաջարի հայ իշխանի  
դավադիր սպանությունը նրա կողմից:<sup>2</sup>

Բազմաթիվ այլ տեղերում հիշատակվում են՝ սել-  
ջուկյան, մոնղոլյան, պարսկական, օսմանյան և այլ  
կարգի բռնապետները—Զալալեղինն ու Զինգիզ խանը,  
Աղա Մահմադ խանն ու Հասան խանը, Սուլթան Մու-  
րագն ու Սուլթան Համիդը, Թալիաթ փաշան ու Էնվեր  
փաշան և Էլի շատ ուրիշները, որոնք տարբեր ժա-  
մանակ և տարբեր տեղերում բռնազատել են հայ ժո-  
ղովրդի ազգային ինքնուրույնությունը, ավերել նրա-  
երկիրը, խոշտանգել նրա զավակներին:

Սակայն, սահմանափակվենք բերված օրինակներով  
և անցնենք առաջ:

## ¶

Իր բազմադարյան բանահյուսության մեջ հայ ժո-  
ղովուրդը չի բավականացել թշնամու ով և ինչ լինե-  
լու մասին պատմելով, նրա արածն ու տարածը սառ-  
նարյուն կերպով արձանագրելով միայն: Դրա հետ  
մեկտեղ, նա շատ որոշակիորեն արտահայտել է իր վե-  
րաբերմունքը թշնամու գործի ու անձի նկատմամբ,  
բանավոր գեղարվեստական խոսքով վերաբարեկ նրա  
դեմ մղած իր թե գաղափարական-բարոյական և թե

<sup>1</sup> «Սասնա Շահեր», Ա. հատոր, էջ 44, 99, 231, 39, 465 և այլն:

<sup>2</sup> Երվ. Լալայան, Զավախիքի բուրմունք, Թէֆլիս, 1892 թ.,  
էջ 54—55:

ուազմական-ֆիզիկական պայքարը։ Այլ կերպ չէր էլ կարող պատահել, քանի որ ժողովուրդը չի եղել ոչ կողմնակի դեմք և ոչ էլ միայն ականատես կատարված եղելությունների, որպեսզի բավարարվեր լոկ կրավորական արձանագրումով։

Պատմական դեպքերի բերումով նա հաճախ հանդիսացել է թշնամու սրի հետանը, իսկ նրա երկիրը դարձել է նույն այդ թշնամու ոտի կոխանը, ավերի ու ավարի առարկան։

Թշնամու դեմ հայ ժողովրդի մղած պայքարի ամենապարզ ու անմեղ ձեերից մեկը, որն իր արձագանքն է գտել նրա բանավոր ստեղծագործության մեջ, եղել է անեծքն ու պարսավանքը։ Ժողովուրդն ի խորոց սրտից անիծել է իր սոոխներին, հավատալով իր խոսքի ուժին, վերջինիս կախարդական զորությանն ու ազդեցությանը։ Իր անեծքի սուր խայթով խոցելով թշնամուն, նա դատարկել է նրա վրա իր մեջ կռւտակված մաղձն ու թույնը, և զրանով իսկ, մասամբ, թեթևացել հոգեպես։

Այսպես օրինակ, իր գութանի երգերից մեկի մեջ հայ գյուղացին նզովել է իր դառն քրտինքի արդյունքը տանելու եկած այլազգի կողոպտիչներին։

«Տղա, հորու բերան բաց.

Հասոն ու Խալոն ա եկած»

Աև ջուր գա ուրանց աչաց...»<sup>1</sup>

Մի ուրիշ տեղ, իր խաղիկներից մեկում, հայ գեղջկուհին անիծել է Գյանջայի (Շուշվա) հայ բնակչու-

<sup>1</sup> Եմինյան ազգագրական ժողովածու, հատոր 2., էջ 140։

թյան արյունախում դահիճներից մեկին, դավագիր ու  
նենդ պատմական հայտնի Փանահ խանին, որը բան-  
տարկել և բանտում «մաշել» է նրա սիրած յարին.

«Գյուլքա կանեմ, խաշար ա,  
թըսածս յարիս պաշար ա.  
Փանահ խան, քու. մար մեռնի,  
իմ յարս խե՞ մաշալ ա»:<sup>1</sup>

Մի երրորդ տեղ, հայ ժողովրդի տարագիր դավակ-  
ներից մեկը, ցավ ի սիրտ, անեծք է կարդացել հայ-  
ցենի եղերքից իրեն բնավեր անող «Դուշմանի» հաս-  
ցեին.

«Դուշման, լեզուդ պապանձի,  
Լեզդ ու թոքըդ խանձի,  
Որ սարեսար, քոլե՞քու  
Չըգըցեիր դու ընձի»:<sup>2</sup>

Եվ այսպես շարունակ:

Լինելով ժողովրդական անեծքի անմիջական ա-  
ռարկան, թշնամին միաժամանակ հանդիսացել է նաև  
այդ անեծքի փոխաբերության ատաղձը: Մեկին խո-  
ցելու համար ժողովուրդը, հաճախ, ավելի խիստ բան  
չի դտել ասելու, քան ցանկալ՝ տեսնել նրան պատժված  
ու պատուհասված թշնամու կողմից: Այսպես օրինակ,  
իր ախոյտնին անիծելիս թիֆլիսեցի հայն ասում է՝  
«Ախտա խանի ղաղաքին (պատիժ) գաս», — ակնարկե-  
լով թիֆլիսն ավերող հայտնի Ախտա խանին, որը

<sup>1</sup> «Աղգագրական հանդես», գիրք Դ., էջ 114:

<sup>2</sup> Աղ. Մխիթարյան, Տաղեր ու խաղեր, Աղեքասանդրոպոյ, 1900 թ., էջ 190:

«Հետո եղել է Աղա Մահմադի խան, անցյալ դարի վերաբին, և զանազան տանջանքներ տալով ժողովրդին, ստիպել է ցույց տալ յուրյանց գույքը»:<sup>1</sup> Նույն կերպ վանեցի գեղջկուհին իրեն «որբեվայրի» նախատականը տվողին կամենում է տեսնել գերված պարսից նվաճողների կողմից.

«Ով ձիկ ասի որբեվերի,  
Էրթա ընկնի աջմու գերի»:<sup>2</sup>

Այսպես և ուրիշները:

Այս կամ այն կոնկրետ թշնամու հասցեին հակառակ-հանվանե ուղղված նզովքների հետ հայ ժողովրդի անհեծքաշարում քիչ չեն նաև ընդհանրապես թշնամուն ակնարկող այնպիսի պարսավական ոճերն ու արտահայտությունները, ինչպիսիք են՝ «Դուշմանի ուրին ուաստ գաս», «Չար թշնամին փաթթե պոլորտ»<sup>3</sup> և այլն:

Անհեծքի ու պարսավանքի հետ հայ ժողովուրդն իր թշնամիներին խոցել է նաև իր բանավոր խոսքի ոչ պակաս սուր ու դիպուկ մի ուրիշ զենքով—երգիծանքի միջոցով։ Հայկական բանահյուսությունը բավական հարուստ է թշնամու հասցեին ուղղված երգիծական բնույթի մեծ ու փոքր հորինվածքներով (երդ, ասմունք, առակ և այլն), որոնց մեջ ծաղր ու ծանակի

<sup>1</sup> Գ. Տեր-Աղեքսանդրյան, Թիֆլիսեցոյ մտավոր կյանքը, Թիֆլիս, 1885 թ., էջ 186:

<sup>2</sup> Գ. Շենքաց, Վահան սաղ, Բ. մաս, 1889 թ., Թիֆլիս, էջ 42:

<sup>3</sup> Երվանդ Լարսյանի 1915—1916 թ.թ. բանահյուսական գիտ. աշշավիլ անտիպ նյութերից. Ճեռագիր № 22, 25:

Ան ենթարկվում նրա (թշնամու) հասարակական-քաղաքական գործունեությունը, անձնական՝ բարոյական ու ֆիզիկական հատկությունները և որոնց միջոցով ժողովուրդն արտահայտում է իր ատելությունն ու վրեժը նրա նկատմամբ:

Բերենք մի երկու բնորոշ օրինակ միայն:

Խոսելով հայոց Սմբատ զորավարի քաջարի նիզակակից Վարազ Պալունու կողմից պարսից բանակին տրված մեծ ջարդի մասին, Դ-րդ դարի հայ պատմիչ Հովհան Մամիկոնյանն իր Պատմության մեջ բերում է ռազմի դաշտի մոտակայքում ապրող հայ գեղջուկների հորինած հետեյալ սուր երդիծականը, որի մեջ նրանք մեծ սրամառությամբ ծաղրի են ենթարկում թշնամուն՝ վերջինիս տված անթիվ դոհերի համար. «Կերան գաղանք զմարմինս դիականցն Վարազայ և գիրացան: Կուզ կերեալ ուռաւ որպէս՝ զարջ, և աղուէս հավարտ եղկ քան զառիւծ: Գայլ քանզի շատակեր էր, պայթեաց, և արջ, քանզի զոր ուտեն՝ չմնայ առ ինքն, ի սովոյ մեռաւ: Անգեղք, քանզի ագանք էին, նստան և այլ ոչ կարացին վերանալ. մկունք քանզի շատ կրեցին ի ծակսն՝ ոտքն մաշեցան»:<sup>1</sup>

Թշնամու դեմ ուղղված ժողովրդական երդիծանքի բավական թունոտ ու սուր մի այլ նմուշ է Մսրա Մելիքի հարկանան կողբաղնի ծաղրը «Սասնա Ծոեր» էպոսում: Վեպի անխտիր բոլոր վարիանտներում պատմվում է, թե ինչպես Մսրա կանայք տեսնելով Սասունից գատարկածեն ու պատուհասված վիճակում

<sup>1</sup> Յով. Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, Վենետիկ,  
1832 թ., էջ 42.

Փերադարձող պարծենկոտ ու շաղակրատ Կողբադնին,  
Ֆրգով ասում են.

«Խոլբաշի ջան, խոլբաշի,  
Իդա դիեն գացիր քընց գել դաղան,  
Ըն դիեն եկար քընց շուն վազան.  
Մզրադդէ վիզի քընց շան խառան,  
Բերանդէ է բաց քընց պատուհան,  
Բերնեդ կերթա քընց չորկի տըկի թան,  
Ճանճեր վըրեն կապած քարվան»:<sup>1</sup>

Ուշագրավ է այստեղ, հատկապես, այն հանգամանքը, «որ հայ ժողովուրդը թշնամուն ծաղրել է տալիս իրեն իսկ հայրենակալիցներին». Եվ դա ոչ միայն տարօրինակ ու անբնական չի հնչում, այլև կրկնապատկռում է ժողովրդական երգիծանքի ուժը: Հայերի հետ, մարցիք ևս չեն սիրում Կողբադնին, որովհետեւ նա Մելիքի կամակատար կույր գործիքն է, այն Մելիքի, որը նչ միայն չի ապահովում նրանց համար խաղաղ ու հանգիստ կյանքի պայմաններ, այլ, ընդհակառակը, գոռով կռվի դաշտ է քշում նրանց, ենթարկելով անառելի փորձությունների:

Ատելությունը թշնամու նկատմամբ, որքան էլ խորը լինի այն, երբեք չի խախտում ժողովրդի համարակալությունը: Ատելով թշնամուն, նա չի կուգանում իրականության հանդեպ: Նա իրեն համախռներ ու ցավակիցներ է գտնում նաև թշնամու բանակը:

Թշնամու դեմ հայ ժողովրդի մզած կրավորական

1 Պ. Մրվանձայանց, Դրոց-Բրոց, էջ 161:

պայքարի զենքերից մեկն էլ եղել է կըո՞նը։ Դժվարանալով ռազմի դաշտում հաղթահարել իր ախոյանների գերակշիռ ուժերը, նա հաճախ դիմել է գերբնական, հրաշալի ուժերի զորությանը՝ աստծու, Քրիստոսի սրբերի և խաչի օգնության։ Ըստ ձեմ լինելով կրոնական, ըստ էության այդ պայքարը կըել է հասարակական-քաղաքական մաքառման բնույթ։

Հայկական ավանդական բանահյուսությունը բավական հարուստ է այնպիսի ստեղծագործություններով, որոնց մեջ ցայտուն կերպով արձագանք են գտել այդ պայքարի դրվագները։ Բերենք մի բնորոշ օրինակ միայն։

Իր վիպական բնույթի չափածո երկերից մեկի մեջ, որը հայտնի է «Կարոս խաչ» անունով, և որը հասել է մեղ մի շարք տարբերակներով, հայ ժողովուրդը խորը հավատով և մեծ ջերմեռանդությամբ վիպերգում է այն մասին, թե ինչպես հայոց հրաշագործ «Կարոս» կոչված խաչը չարաչար պատճում է ժողովրդի սրբության վրա ձեռք բարձրացնող այլադավան բռնակալին։

Քառասուն հոտաղներ գաշտում մի բողե (բանջարի տեսակ) խաչ են շինում և սկսում են երկրպագել նրան։ Երկնային զորությամբ խաչի մեջ շնորհք է իջնում, «քյառասուն ձիուց մեջին, խավքու պես» թռոչում, նստում է Կարոսի (նեխուրի) ածվի մեջ և դառնում Կարոսի խաչ։ Ժողովուրդը մեծ թափորով բերում, դնում է այն գյուղական տաճարի մեջ։

«Յերեկ խով կաներ վեր էն գեղին,

Գիշեր լուս կամար կապեր վեր տաճարին»;<sup>1</sup>

<sup>1</sup> Այս և հետագա բոլոր մէջբերումներն արված են հետեւյաց

Հրաշալի կարոս խաչի համբավը, գյուղական գղրի  
մատնությամբ, հասնում է պարսից խանին կամ քուրդ  
պարոնին (ըստ այլ վարիանտների): Վերջինս ուղար-  
կում է իր մարդկանց (Ալուն և Մահմադին), որպեսզի  
բերեն կարոս խաչը, ասելով՝

«Են խաչ չի վելե՛ խայոց աղդին,  
Են կը վելի քյուրդ պարոնին,  
Են խաչ չի վելե՛ խայոց տաճարին,  
Են կը վելի իմ դիվանին...»:

Սակայն նրանց «առաքելությունը» ապարդյուն է  
անցնում: Կարոս խաչը կատաղեցնում է նրանց.

«Կատղավ Ալին, կատղավ իր ձին.  
Դարձավ կերավ իր ձիու ցին.  
Կատղավ Մահմադ, կատղավ իր ձին,  
Մտամն առավ թևի կաշին...»:

Քուրդ պարոնը զորք է ուղարկում հայերի դեմ:  
Յարոս խաչի անեծքով թշնամու զինվորներն սկսում  
են կոտորել իրար.

«Առջինն դարձավ վեր հետինին,  
Հետին դարձավ վեր առջինին,  
Ջանդկե բերդ կայնավ մեջ կես դաշտին,  
Արուն գետ դարձավ մեջ կես դաշտին»:

---

Արքերից. Հ. Աձեմյան, Ծաղկաքաղ Վասպուրականի հայ ժողո-  
վը ըստ ականական բանահյուսության, Էջմիածին, 1917 թ., էջ 23—34.  
Դ. Հովհաննիան, Փշանքներ ժողովրդական բանահյուսությու-  
նից, Թիֆլիս, 1893 թ., էջ 12—16. Կոմիտաս վարդապետ  
Հ. Մ. Աքեղյան, Հաղար ու մի խաղ, Բ. հիմնյակ, էջ 87—97.

Գաղաղած թշնամին ուզում է նոր զորք ուղարկել  
հայոց ազգի դեմ, սակայն այդ էլ արդյունք չի տա-  
լիս.

«Բերդ էրերաց վեր իր հիմին,  
Կատղավ պարոն մեջ իր բերդին,  
Զին էլ կատղավ մեջ ախոռին,  
Կատղավ մանուկ օրորոցին,  
Կատղավ խանում մեջ իր օդին,  
Կաթն էլ կատղավ մեջ պղնձին.  
Կատղավ գզիր մեջ իր գոմին,  
Դարձավ կերավ միսն իր անձին»:

Զղջում է քուրդ պարոնը, մատաղ է խոստանում՝  
Կարս խաչին իր շարժական ու անշարժ գույքը, բայց  
խաչը չի ընդունում նրա ղղջումը.

«Քուրդ պարոնի բերդ ավերեց,  
Աշխարհ թափան եկան վերան.  
Հիվանդացուց էն շուն գզրին,  
Կերն ընկավ գզրի բերան,  
Մեռավ, տարան լեշ խորեցին,  
Շներ հանին, տարան, կերան»:

Համապատասխան պատմական տեղեկությունների  
բացակայության պատճառով մենք հնարավորություն  
չունենք որոշելու «Կարս խաչ» վիպերգի ոչ հորինման  
ժամանակաշրջանը և ոչ էլ նրա հիմքում ընկած պատ-  
մական կոնկրետ դեպքերն ու դեմքերը։ Մեզ մնում է  
ընդունել այն իրըև մի վիպական-գեղարվեստական  
ընդհանրացում այլազգի ու այլադավան բռնակալների  
դեմ հայ ժողովրդի մղած ոլայքարի, որին հաճախ առիթ

են տվել հիշյալ բռնակալների կողմից Հայաստանում հաճախակի կատարված ավերն ու ավարը, մասնավորապես եկեղեցիների ու վանքերի կողովտումը և կրոնավորների խոշտանգումը (տես նաև Մարութա վանքի ավերման պատմությունը «Սասնա Ծռեր» էպոսում, և այլն):

Հայկական բազմադարյան բանահյուսության մեջ շատ ավելի խորը և բազմակողմանի արձագանք է գտել թշնամու դեմ հայ ժողովրդի մղած ոազմական պայքարը, նրա դարավոր ու անդուլ զինված մաքառումը:

Զնայած իր համեմատաբար փոքր թվին, լինելով հայրենասեր ու ազատատենչ մի ժողովուրդ, հայ ժողովուրդը երբեք կամովին հանձն չի առել օտարերկրյա բռնակալների բերած ստրկության ստորացուցիչ ու ծանր շղթաները: Լցված անհուն ատելությամբ ու վրեժով դեպի թշնամին, և ոգեշնչված իրենց գործի արդարության բարձր գաղափարով, հայ ժողովրդի անձնվեր ու խիզախ զավակները զենքը ձեռքներին միշտ աննկուն և համառ պայքար են մղել նրա դեմ:

Հայկական բանահյուսությունը, մասնավորապես նրա վիպական բաժինը, ոչ այլ ինչ է, բայց եթե այդ բանահյուսությունն ստեղծող ժողովրդի՝ արտաքին թշնամու դեմ մղած ազատադրական-պաշտպանական կորիմսերի և ժողովրդական հերոսների տարած փայլուն հաղթանակների գեղարվեստական, բանավոր պատմությունը: Հիշենք այդ պատմության առավել խոսուն դրվագները՝ «Հայկի և Բելի» առասպելը, «Տիգրանի և Աժդահակի» վեպը, «Արտաշեսի և Երվանդի» պատմությունը, «Շապուհի» և Մուշեղի» դրույցները, և այդ-

բոլորի գլուխ-գործոց «Սասնա Ծռեր» հերոսական դյուշաղնավեպը:

Թշնամու դեմ իր հերոսների տարած հաղթանակի մասին ժողովուրդը վիպել է ոչ միայն այն ժամանակ, երբ նրանք հաղթել են ռազմի դաշտում, այլև, հաճախ, այն դեպքերում, երբ նրանք ստիպված են եղել տեղի տալ թշնամու գերակշիռ ուժերի առաջ, երբ վերջինս ավերել ու ավարել է նրանց հայրենի երկիրը։ Զափաղանց բնորոշ է այս տեսակետից հայկական վիպական բանահյուսության գլուխ-գործոց «Սասնա Ծռեր» էպոսը։ Ստեղծվելով Խութեցի Հովհաննի գլխավորությամբ Սասնո աշխատավոր բնակչության՝ արաբական Յուսուփի ոստիկանի հսկայական բանակի դեմ տարած փայլուն հաղթանակի առթիվ (851 թ.), վեպը ոչ միայն չի մոռացվել այդ ապստամբությանն անմիջապես հաջորդող արյունաբրու Բուղայի արշավանքի ժամանակ (852 թ.), (երբ նրա կողմից հերթով ձնշվել են Հայաստանի տարբեր գավառներում ծագած ժողովրդական ապստամբությունները, կոսորվել, գերեվարվել են այդ գավառների բնակիչները և հրի ու սրի է մատնվել ողջ Հայաստանը), այլև կենդանի մնալով՝ պատմվել է ժողովրդի մեջ, ոգեսորել նրան, և գնալով ավելի մշակվել ու ձեավորվել։ Այս, առաջին հայացքից տարօրինակ երևութը, որը թվում է թե չի համապատասխանում ժողովրդական ստեղծագործության ռեալիստական ընդհանուր ոգուն, ըստ էության բխում է այդ ոգուց և բացատրվում է ժողովրդին հատուկ առողջ օպտիմիզմով, նրա՝ իր վերջնական հաղթանակի մասին ունեցած վառ հավատքով, մի հավատք, որն իր ուժեղ արձագանքն է գտել միշտ նույն

ժողովրդի բանավոր ստեղծագործության մեջ, և որի  
մասին Ա. Մ. Գորկին ասել է. «Ֆոլկլորին կատարե-  
լապես խորթ է հոռետեսությունը, չնայած այն փաս-  
տին, որ ֆոլկլորն ստեղծողները ծանր կյանք են ու-  
նեցել, և նրանց տանջալից ստրկական աշխատանքը  
իմաստագուրկ են դարձրել շահագործողները, իսկ անձ-  
նական կյանքը եղել է իրավազուրկ ու անպաշտպան:  
Սակայն, չնայած այդ բոլորին, կոլեկտիվին հատուկ  
է եղել անմահության գիտակցությունը և այն հա-  
մոզմունքը, թե նա կհաղթանակի իրեն թշնամի բոլոր  
ուժերին»;<sup>1</sup>

Ճշմարտացիորեն արտացոլելով իր մեջ թշնամու  
բռնակալական, արյունոռուշտ ու դավադիր էությունը,  
ինչպես նաև այն պայքարը, որ մղել է ժողովուրդը  
նրա դեմ, հայկական հին բանահյուսությունը միա-  
ժամանակ հանդիսացել է այդ պայքարի կարևոր դեն-  
քերից մեկը։ Հայ շինականն ու ուամիկը դարերի ըն-  
թացքում իրենց պապենական սուրբ օջախի շուրջը՝  
լսելով իրենց իսկ ծոցից դուրս եկած ժողովրդական  
վիպասանների ու գուսանների առասպելներն ու զը-  
րույցները, վեպերն ու երգերը՝ իրենց հայրենիքի  
ոխերիմ թշնամիների մասին, խորը ատելությամբ են  
լցվել նրանց նկատմամբ։ Այդ առասպելներն ու զըրույց-  
ները, վեպերն ու երգերը բորբոքել են նրանց մեջ  
սրբազն վրեժի ու արդար ցասման հուրը, նոր լիցք  
տվել նրանց՝ իրենց ժամանակակից թշնամիների դիմ  
պայքարելու համար։

<sup>1</sup> Ա. Գորկի, Խորհրդային գրականության մասին, Երևան,  
1934 թ., էջ 32—33։

\*  
\*\*

Փոխվել են ժամանակները: Հայ ժողովուրդն այսօր ապրում է բռլորովին այլ կյանքով: Նա այժմ ունի իր նոր հերոսներն ու ոստիները: Ժամանակների հետ փոխվել է նաև ավանդական հայ բանահյուսության բովանդակությունը: Հայոց նորագույն գուսաններն ու վիպասանները հիմա պատմում ու երգում են իրենց ժողովրդի այդ նոր կյանքի ու պայքարի, նրա նոր հերոսների ու ոստիների մասին:

Ժամանակակից հայկական բանահյուսության մեջ այսօր գծագրվում է հայ ժողովրդի նորագույն թշնամու, նրա խաղաղությունը վրդովող և ստեղծագործ աշխատանքը խանդարող արյունկղակ Հիտլերի ճիվաղային կերպարը:



Армянский Филиал Академии Наук СССР  
Институт Литературы и языка

---

А. ГАНАЛАНЯН

ОБРАЗ ВРАГА В ДРЕВНЕАРМЯНСКОМ  
ФОЛЬКЛОРЕ

(На армянском яз.)

Издание Армфан. Ереван, 1943 г.

ԳՁ 03318, պատվեր 724, հրատ. № 200, տիրաժ 3000.  
Ստորագրված է տպելու 14 հոկտեմբ. 1943 թ.

---

ՆԴԺԿ Վարչութեաժնի տպարան, Երևան.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ


ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գիտ.



FL0042120

[406]

ԴԻՆԸ 4 ՌՈՒԲ.



1447/Տ-87

3р